ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս համալսարանի ռեկտոր Սահակ Մինասյանի (այսուհետ՝ ՇՊՀ), որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, ի դեմս ռեկտոր Կորյուն Աթոյանի մյուս կողմից (այսուհետ՝ ՀՊՏՀ), (այսուհետ՝ Կողմեր)՝ հիմք ընդունելով ՀՀ բուհերի միջև համագործակցության զարգացման կարևորությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

Պայմանագրի հիմնական նպատակն է.

1. կազմակերպել պատվիրակությունների այցելություն համալսարաններ՝ նախապես ճշտելով և ամրագրելով այցելության նպատակը, ժամանակը, տևողությունը, ծախսերը,
2. իրականացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունություն՝ նախապես ամրագրելով փոխանակման պայմանները, ֆինանսավորումը,
3. տեղեկություններ տրամադրել համալսարաններում գործող կրթական ծրագրերի մասին,
4. մշակել համատեղ կրթական ծրագրեր և/կամ առանձին դասընթացներ՝ ուսանողների համար ենարավորություններ ստեղծելով կրթություն ստանալ նաև հեռավար ուսուցման միջոցով,
5. կազմակերպել ուսանողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ, վարպետության դասեր, կլոր սեղաններ, թեմատիկ բանավեճեր,
6. համալսարանների գիտական ամսագրերում հրատարակել համատեղ ուսումնագիտական հետազոտությունների արդյունքներ,
7. տրամադրել գիտակրթական և մեթոդական գրականություն և մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրներ, ինչպես նաև մշակել և խմբագրել գիտական աշխատություններ, դասագրքեր, ուսումնական նյութեր, մեթոդական ձեռնարկներ,
8. կազմակերպել համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովներ,
9. իրականացնել համատեղ գիտական դրամաշնորհային ծրագրեր,
10. ներգրավել մյուս կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր,
11. մասնակցել համալսարաններում կազմակերպվող այլ կրթական, գիտական, մշակութային ծարագրերին, միջոցառումներին:

Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում 5 տարի ժամկետով:

Եզրափակիչ դրույթներ

1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:
3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ. Սևակ 4	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 128, 0025
Ռեկտոր՝ Սաթենիկ Մինասյան	Ռեկտոր՝ Կորյուն Աթոյան
Կ. Տ.	Կ. Տ.